ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԻՏՔ

ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

1

ԵՐԵՎԱՆ 2008

ՀԱՑ ԴՊՐՈՑԸ՝ ԱԶԳԱՑԻՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԿԵՐՏՄԱՆ ՀՆՈՐՑ

(ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐ)

ՌՈՒԲԻՆԱ ՓԻՐՈՒՄԵԱՆ

Հայկական գաղթօճախներից ամենահայաշատ եւ ամենատարածան չասելու համար խայտաբղետ գաղութն է Կալիֆորնիան, ուր մեծ մասամբ տնտեսական բաւարար պայմաններում ապրում է աւելի քան 500,000 հայ: Մօտաւոր հաշուով, այդ թուի մէջ պիտի տեսնել առնուազն 100,000 մանկապարտէզից միջնակարգ յաճախող աշակերտութիւն: Սակայն իրողութիւնն այն է, որ այս համեմատաբար հսկայ թուից հազիւ տաս տոկոսն է քիչ թէ շատ հայեցի կրթութիւն ստանում՝ դա լինի ազգային դպրոցներում, որոշ պետական դպրոցներում տրուած արտադասարանային սահմանափակ դասապահերով, կամ շաբաթօրեայ դպրոցներում, ու որոշ չափով էլ հայ եկեղեցական եւ մշակութային միութիւններում: Հէնց այստեղ արդէն պատկերը յստակ է՝ Կալիֆորնիայում ապրող հայ մանուկների ու պատանիների մեծամասնութեան հայեցի դաստիարակութիւնը թողնուած է պատահականութեան, լաւագոյն դէպքում՝ ծնողի հոգածութեան: Պատկերը որոշ չափով յուսադրիչ է մնացեալ փոքրամասնութեան մօտ: Ասացի որոշ չափով՝ որովհետեւ այդտեղ էլ կրթական պատասխանատուների ճիգն ու ջանքը լիարժէք արդիւնքի չի հասնում, պայքարը հայակուլ մշակոյթի դէմ է, ամերիկեան կլանող ու առինքնող ձուլարանի դէմ եւ այն էլ սահմանափակ միջոցներով:

Ըստ Ամերիկայի ընկերային ու մշակութային ներկայ պատկերը ուսումնասիրող գիտնականների՝ այսօր աւելի քան երբեք հասարակութեան մէջ ընդունուած են տարբեր մշակոյթները, տարբեր կրօնները ու տարբեր լեզուները: Այլ խօսքով՝ բարձր է հանդուրժողականութիւնը անհատի էթնիք (ազգային) ինքնութեան նկատմամբ: Այս գիտնականները պնդում են, թէ Ամերիկան այլեւս ճուլարան չէ, այլ գունաւոր խճանկար կամ նոյնիսկ սալաթա է՝ գունագեղ ու տարազան բաղադրիչներով: Եթէ անգամ ճշմարտութեան մօտիկ երեւոյթ լինի ներկայացուածը, այդուհանդերձ չի պակասում քաշողականութիւնը համընդհանուր կենցաղի, ապրելակերպի ու աշխարհայեացքի եւ մանաւանդ՝ ձգտումը տիրող մշակոյթի հետ նոյնանալու: Հայ սերունդներին հայ պահելու ճիգը դառնում է մարտահրաւէր ու շարունակական պայքար, որ պարտադրում է անդադար հարցադրումի ենթարկել որդեգրուած կրթական մարտավարութիւնն ու կիրառուող միջոցները: Իսկ դա միշտ չէ, որ յաջողւում է:

Ծառացած մարտահրաւէրը մնում է նոյնը: Մեր դպրոցներում, դպրոցի, բակի, դասարանի ընձեռած բոլոր պատեհութիւնները օգտագործելով, ինչպէ՞ս կարելի է հայ աշակերտի մէջ ամրակայել հայը, որ կարողանայ ամերիկեան միջավայրի ու մշակոյթի մագնիսադաշտում տոկալ ու յարատեւել, հայը՝ որ հաւասարակշիռ առկայութիւն լինի ամերիկեան քաղաքացու եւ ամերիկեան պատկանելիութեանը զուգընթաց: Ինչպէ՞ս կարելի է դաստիարակել հայ մարդը, որ հպարտ է իր արմատներով, իր ազգային արժանիքներով եւ արժէքներով, որ այսօրուայ ամերիկեան իրականութեան մէջ ապրում ու ստեղծագործում է առանց ստորակայութեան զգացումի:

Հաւակնութիւն չունեմ կատարելիք դիտարկումներս, ուսումնասիրութիւններից բխած հաստատումներս եւ առաջադրածս հարցադրումները ընդհանուր սինթեզի հասցնելու: Նիւթը խրթին է եւ պարզ լուծումներ չի ընդունում: Նպատակս տեղական դժուարութիւնները մատնանշելն է, աւելի՝ ախտաճանաչում: Գիտենք բոլորս էլ, թէ հոսանքի դէմ ենք մաքառում: Ամերիկեան միջավայրը, իր ուսումնական, տնտեսական, հաճոյական եւ այլ կարելիութիւններով, կլանում է հայ պատանուն ու երիտասարդին: Ամերիկայի բազմազգ եւ բազմամշակոյթ դրոյթը, հակառակ ընկերաբանների պնդումին, արտաքին երեւոյթ է միայն: Ձուլումն ու ամերիկացի քաղաքացու կերտումը՝ իր իւրայատուկ տիպարով, նախասիրութիւններով եւ քաղաքական ու ընկերային ուղղուածութեամբ իրագործւում է անկասկած:

Այնուամենայնիւ, Ամերիկայում գոյութիւն ունեն երկու երեւոյթ եւ մէկ նուազ շեշտուող, բայց առկայ շարժում, եւ կարելի է դրանք մեր ազգային շահերին ծառայեցնել: Այսինքն՝ այսօրուայ Ամերիկայի բազ-

մազգ եւ բազմամշակոյթ միջավայրը կարող է նպաստել մեր պայքարին: Եւ իրօք, ամերիկացի ընկերաբանների նոր ուսումնասիրութիւնները հնարաւոր են դտնում մի անհատի համար տիրապետել մի քանի մշակոյթների եւ ամբողջովին հանգիստ զգալ մի քանի ազգային, մշակութային ինքնութեան հետ. իսկ UNESCO–ի միջմշակութային կրթութեան (intercultural education) նուիրուած համագումարում (2003) Purdue համալսարանի դասախօս Lynn Zimmerman–ի կարծիքով՝

It is possible to be competent in more than one culture and to be comfortable with more than one national/cultural/ethnic identity.

Գոյութիւն ունի նաեւ այն համոզումը, թէ մի բազմազգ եւ բազմամշակոյթ համայնքում անհատներին մէկ ու միակ ազգային ինքնութիւն պարտադրելու փոխարէն եթէ յարգուի նրանցից իւրաքանչիւրի ինքնութիւնը, համայնքը աւելի առողջ ու կենսունակ կը լինի:

Նորովի երեւոյթ է նաեւ 2001, սեպտեմբեր 11–ին Նիու Եօրքում կատարուած ահաբեկչական արարքին հետեւող եւ դրա արդիւնքում առաջացած հայրենասիրական շարժումը եւ այդ շարժման մուտքը դպրոց՝ *The American patriotism and the need to teach the idea in schools.* Այս ձեւակերպումը կարելի է որոշ փոփոխութեամբ ազգային պատկանելիութեան զգացումի փոխանցման հասցէագրել: Նման երեւոյթ օտար չի մեզ համար. չէ՞ որ Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին, երբ ստալինեան քաղաքականութիւնը հայրենասիրութեան սերմեր էր ցանում, այդ հայրենասիրութիւնը Հայաստանում Խորհրդային մեծ հայրենիքին ուղղուելու փոխարէն զուտ ազգային դրոշմ կրել սկսեց:

Այս բոլոր ազդակների հաւաքական ազդեցութեան դաշտը ճանաչելով, ինչպէ՞ս դիմակայել հային հայ պահելու նպատակը հետապնդող հայ կրթական օճախների դէմ ցցուած դժուարութիւնները: Յստակ է, որ հայ վարժարանները ghetto–ներ չեն եւ չպիտի լինեն: Այնտեղից դուրս եկողները միակողմանիօրէն դաստիարակուած ազգայնամոլներ չեն լինելու, որոնք ամերիկեան միջավայրում ապրելու եւ ստեղծագործելու ատակ չեն, զէնքը չեն ստացել: Կամ աւելի նուրբ նմանակով ասուած, ջերմանոցի ծաղիկներ չենք մշակում: Այդ ծաղիկը պիտի կարողանայ դրսի միջավայրում եւս պահել իր իւրայատուկ բոյրը, իր յատկանիշները: Ուրեմն հայ վարժարանը պիտի լինի այն վայրը, ուր աշակերտի հաւասարակշռուած եւ այսօրուայ տուեալներով բացատրուող ազգային ինքնութիւնն է դարբնուում: Իսկ մանկավարժական մօտեցումները, դասածրագիրներն ու դասագրքերը ազդու միջոցներն են այդ նպատակի՝ աշակերտին ներշնչել իր իւրայատուկ լինելու հպարտութիւնը. ինչպէս Charles Taylor–ն է բացատրում, *"At the core of the*

concept of identity is the need to be recognized as unique, as a person or as a group". Այդ անհատական թէ հաւաքական կամ ազգային իւրայատկութիւնը ճանաչել տալը մի կարեւոր մարդկային պահանջ է, ու դեռ աւելին՝ մարդկային իրաւունք:

Ինչո՞վ ենք մենք իւրայատուկ, կամ ի՞նչ տարրեր են կազմում մեր այս հաւաքական իւրայատկութիւնը՝ մեր ազգային ինքնութիւնը. լեզու, մշակոյթ, աւանդութիւն, կրօն, պատմութիւն, հողային պատկանելիութիւն:

Ազգային ինքնութեան հիմքում ընկած այս տարրերի դասաւանդումը իբրեւ առարկայ, իբրեւ հոգի, իբրեւ արժէք, կարող է աշակերտի մէջ արմատաւորել նրա հայկականութիւնը, կամ բոլորովին ջախջախել այն՝ հակառակը, անտարբերութիւն, նոյնիսկ ատելութիւն սերմանելով այն ամէնինչի հանդէպ, որ ազգային է: Այս բոլորի օրինակները ունենք մեր դպրոցներում: Ուրեմն որքան կարեւոր է յարմարագոյն դասածրագրի (կրթակարգի) եւ դասագրքի ընտրութիւնը եւ մանկավարժական յարմարագոյն մեթոդի կիրառումը այս տարրերի լաւագոյն փոխանցումը ապահովելու համար: Որպէս օրինակ վերցնենք իմ կարծիքով ամենից կարեւորներն ու ազդեցիկները՝ պատմութիւնն ու լեզուն:

Իհարկէ, մեր պատմութիւնը պատրաստի կապոց չի, որի վրայ մեր ազգային ինքնութիւնը հիմնենք: Մենք պիտի ընտրենք այն, ինչ որ պիտի կարողանայ զօրացնել եւ ապահովել մեր ազգային ինքնութեան շարունակականութիւնը՝ այս պարագայում, օրինակ՝ Հայոց Ցեղասպանութեան առթած իրողութեան՝ հայրենիքի կորստի եւ սփիւռքացման, ինչպէս նաեւ դրա հետեւանքով մեր ազգային պահանջատիրութեան եւ դրա ըստ ամենայնի իրացման որոշակի ընտրութիւն եւ փոխանցում: Փակագծի մէջ յիշենք, որ Ֆիննական դպրոցներում ազգային դաստիարակութիւն ներարկելու մտահոգութեամբ կատարուած ուսումնասիրութիւնը նմանօրինակ ճամբայ է գծում, այսինքն՝ Ֆիննական ազգային ինքնութիւնը հիմնւում է Ֆինլանդիայի ազատագրական պայքարի վրայ՝ ընդդէմ ցարական Ռուսաստանի եւ Սովետական Միութեան: Վստահ չեմ, թէ մեր իրականութեան մէջ օգտագործւում է սրան զուգահեռ երեւոյթը: Բացի այդ, եթէ պատմութեան դասաւանդումը հայակերտման պիտի ծառայի, ապա կարեւոր են թէ՛ ուսուցիչը, եւ թէ դասագիրքը: Վստահ չեմ, թէ մեզ մօտ աշխատում են սրանց լաւագոյնները:

Յոյժ կարեւոր է նաեւ լեզուի դասաւանդումը եւ նրա հոգեբանական, մանկավարժական եւ մեթոդաբանական քաղաքականութիւնը: Պիտի նկատի առնել այն հարցը, թէ հայերէնը, թէկուզ մայրենի լեզու, արդեօք մօր լեզո՞ւն է, թէ՞ տան մէջ այլ է հաղորդակցութեան միջոցը: Այս վերջինի պարագայում դժուար թէ աշակերտի մէջ առաջանայ հետաքրքրութիւնը հայե-

ըէն սովորելու: Ի՞նչ պէտք ունի մի լեզու, որ իր համար գործածական էլ չի: Դարձեալ, եթէ նոյնիսկ հայերէնը աշակերտի մայրենի լեզուն է, որքանով է նրա հաղորդակցութեան լեզուն, մանաւանդ՝ որ հայերէնը պարապուում է որպէս լեզու միայն եւ չի ծառայում այլ առարկաների դասաւանդմանը: Ուրեմն հայերէնը հաղորդակցութեան միջո՞ց, թէ՞ սիմվոլիք նշանակութիւն ունեցող՝ ազգային ինքնութեան բաղկացուցիչ տարր: Յետոյ կան հայերէնը աւելի դժուարացնող եւ նոյնիսկ ատելի դարձնող պարագաները՝ երբեմն՝ դասանիւթը անհրապոյր, աշակերտի իրականութեան անառունչ: Իսկ աւելի կարեւոր լեզուի հետ եկող քերականութիւնը, բոլորովին անհետաքրքիր եւ աշակերտի համար անգործածելի եւ աւելորդ բեռ:

Լեզուն ազգային ինքնութեան կազմութեան մէկ տարրը կարող է լինել միայն այն ժամանակ, երբ հաղորդակցութեան միջոց է եւ ո՛չ թէ ազգութիւնը յատկանշող խորհրդանիշ: Այս հարցը դեռ լուծուած չի մեզ մօտ:

Ազգային ինքնութեան ձեւաւորման ու ամրակայման համար մանկավարժական յարմարագոյն մեթոդի մեր փնտրտուքի մէջ հսկայական մարտահրաւէրի առջեւ ենք կանգնած: Ուսուցիչը դառնում է կիզակենտրոն, առաջնահերթ կարեւորութիւն ունեցող ազդակ եւ միջոց: Աւելանում են պահանջներն ու ակնկալիքները ուսուցչից: Նրա պարտականութիւնը պարզ դասատուութեան մէջ չի սահմանափակուում: Ուսուցիչը դառնում է կենդանի օրինակ իր խօսքով ու գործով: Քանի՜-քանի աշակերտներ իրենց բարձրագոյն մասնագիտութիւնը ընտրել են տուեալ առարկան դասաւանդող ուսուցչի անձից ու անհատականութիւնից ներշնչուելով: Ուսուցիչը աշակերտի ընկերն ու խորհրդատուն պիտի լինի mentor-ը, որ ենթադրում է աւելին քան դասարանին սահմանուած ուսուցչի եւ աշակերտի յարաբերութիւն: Ուսուցիչը որպէս mentor եւ role model շահագրգռութիւն ունի աշակերտի նկատմամբ ու նրա տրամադրութեան տակ է դնում իր կեանքի փորձը, իր անհատականութիւնն ու գործը իբրեւ օրինակ:

A good mentor
Is always available
Is a good listener
Achieves satisfaction in a student's success
Keeps sharp professionally and stays on top of his/her field

Սրանք ընդհանրական սկզբունքներ են ուսուցչի իդեալական կեցուածքը բնորոշող: Եւ իրօք, լաւ ուսուցիչը իր գիտելիքով, իր կեանքի վարքագծով, իր աշխարհայեացքով, իր գործով ու խօսքով կարող է աշակերտի ներշնչման աղբիւրը լինել, նրա պատուհանը՝ դէպի ապագայ ուղեգիծ: Դասարանը բաւական չէ այդ բոլորը իրագործելու համար, եթէ պիտի թողած տպաւորութիւնը եւ գործած ազդեցութիւնը դպրո-

ցական տարիների սահմանից անցնի եւ աշակերտին ընկերակցի ամբողջ կեանքում: Իսկ երբ հարցը հայոց լեզուն, պատմութիւնը, Հայ Դատը՝ բարձր դասարաններում եւ կրօնը, այսինքն՝ այն առարկաները, որոնք ներառուած են ազգային դպրոցների դասածրագրի մէջ, ո՛չ միայն իբրեւ առարկայ, այլ՝ իբրեւ հոգի, իբրեւ արժէք, իբրեւ ազգային ինքնութեան կերտման կռուան դասաւանդելը, այս ընդհանրական սկզբունքներին էլ պիտի գերազանցել: Սա պակասում է մեզ:

Ի՞նչ եմ ուզում ասել: Վերցնենք դարձեալ պատմութեան օրինակը: Ըստ պատմութեան դասաւանդման դասական մեթոդի, օրինակ, ուսուցիչը պատմում, նկարագրում է պատմական իրողութիւնը, իսկ աշակերտը փորձում է այդ բացատրութեան տրամաբանութիւնը հասկանալ: Դասը դառնում է պարտականութիւն, որ ոչինչ չի տալիս աշակերտին, բացի լաւ թուանշան ապահովող գիտելիք: Եթէ այդ գիտելիքը պիտի աշակերտի ազգային ինքնութեան զարգացմանը ծառայի, ուսուցիչը պիտի կարողանայ նրան տալ գերճանաչման վարժանք (metacognitive skills), որ օգտագործելի լինի դպրոցական նստարանից անդին, կեանքի ընթացքում: Աշակերտը չպիտի պարտադրուի հետեւելու ուսուցչի կամ դասագրքի պարտադրած տրամաբանութեանը: Նա պիտի մասնակից լինի այդ տրամաբանութեան առաջացման, այսինքն՝ այն հարցադրումներին եւ հարցերը վճռելու այն process–ին, որ պատմական կարեւոր հասկացութիւնների, յղացքների, ըմբռնման է առաջնորդում: Ֆինլանդացի Sakari Suutarinen–ը գրում է՝

The learner gets immersed in the problem solving process that leads to understanding the context of important concepts.

Այս մեթոդի մէջ աշակերտը կրաւորական կեցուածք չի կարող ունենալ: Աշակերտը ամբողջ ընթացքում մղւում է այդ գիտելիքի կառուցողական process–ին մասնակից դարձնելու իր եսը, անհատականութիւնը, գիտելիքը, աշխարհընկալումը: Այս process–ի մէջ փոխադարձ ազդեցութեան դաշտում են գտնուում աշակերտը եւ իրեն փոխանցուած գիտելիքը, որ դաս ենք կոչում, մի տեսակ dialogue աշակերտի եւ դասի միջեւ: Արդիւնքը գիտակցուած եւ իւրացուած ընկալումն է ո՛չ միայն պատմական փաստերի ու իրողութիւնների, այլ դրանց կառոյցը կազմող իմացութեան: Դարձեալ Suutarinen–ի կարծիքով՝

To teach what can be used during a person's school years and years later in a person's identity formation process, the learning must occur on high level, so that the students adopt not just the facts but the structure of the knowledge.

Մեր վարժարաններում սովորութիւն դարձած *"I pledge allegiance to the Flag"* կամ *«Ես հայ եմ, իմ հայրենիքը կը կոչուի Հայաստան»* կարգախօսների ամենօրեայ հանդիսաւոր ու բարձրաձայն կրկնութիւնը աւելի նուազ չափով հայրենասիրութիւն կարող է ներշնչել աշակերտին, քան եթէ աշակերտը կարդայ հայրենասիրութեան մասին, սովորի դրա ինչ լինելը, տեսնի գործի մէջ՝ իր դպրոցի միջավայրում, իր ուսուցչի, իր մեծերի վարքագծի մէջ: Սա պակասում է մեզ:

Հայեցի առարկաները սերտելն ու լաւ նիշ ստանալը չեն կարող չափանիշը լինել աշակերտի հայրենասիրական զգացումների եւ ազգային անհատականութեան: Դեռ որեւէ քննութիւն կամ չափորոշիչ չկայ այդ զգացումը, այդ պատկանելիութիւնը գնահատող: Սակայն կայ վարժանքը աշակերտի գիտակցութիւնը այդ մակարդակներին հասցնելու: Առաջին քայլը կատարել է ծնողը իր զաւակին ի գին ամէն դժուարութեան — երկար ճամբայ, բարձր թոշակներ — հայկական վարժարան ուղարկելով: Միւս քայլերը պիտի ձեւաւորուեն դպրոցում՝ ուսուցիչ–աշակերտ յարաբերութեան միջոցով, դասաւանդման մեթոդի նպատակադրուած կիրառման միջոցով, դպրոցական միջավայրում կազմակերպուած իւրայատուկ միջոցառումների ճամբով: Սա պակասում է մեզ: Այս ծիրում, սակայն, գնահատանքի արժանի երեւոյթ է եւ իր անժխտելի արդիւնքներն է տուել վերջին տարիներին սովորութիւն դարձած նախաաւարտական աշակերտների եւ պատկան ուսուցիչների այցը Հայաստան: Աշակերտները մեծ մասամբ վերադառնում են լիցքաւորուած, հայկականութեամբ եւ հայրենասիրութեամբ տոգորուած: Իսկ այդ նախաձեռնութիւնը, որ նոր մակարդակների է բարձրացնում աշակերտ–ուսուցիչ յարաբերութիւնը եւ իրական, չօշափելի կապ հաստատում հայրենիքի հետ, կարող է աւելի արդիւնաւէտ լինել, եթէ ծրագիրը ընդգրկի մասնակցութիւնը Հայաստանի կրթական հաստատութիւնների, շփումները լինեն ծրագրուած եւ նպատակաուղղուած:

Հայկական դպրոցները Կալիֆորնիայում պահւում են ի գին հսկայ նիւթական յանձնառութիւնների: Դպրոցները տնտեսական մեծ բեռ են գաղութի համար. դրանով հանդերձ, ի համեմատութիւն պետական դպրոցների, սահմանափակ են հնարաւորութիւններն ու յարմարութիւնները եւ աշակերտին տրամադրուած առիթները. ցածր է նաեւ ուսուցիչների, մանաւանդ՝ հայկական առարկաներ պարապող ուսուցիչների վարձատրութիւնը եւ ուրեմն՝ ասպարէզը ոչ–գրաւիչ: Այս իրողութեան զոհը հայեցի դաստիարակութիւնն է ու վերջին հաշուով աստիճանական օտարումն է այս ափերում հասակ նետող սերունդների: